ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԽՈՒՌԻ-ԽԵԹԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մ թ. ա. III հազարամյակի վերջում Հայկական լեռնաշխարհում պատմական կարևոր փոփոխություններ են տեղի ունենում։ Սև փայլեցրած խեցու մշակույթը Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերից որոշ ցեղախմբերի տեղաշարժի հետևանքով ներթափանցում է Արևելքի նշանավոր կենտրոններ՝ Կիլիկիա (Մերսին բնակավայրը), Հյուսիսային Սիրիա (Ամուկ 2-րդ և 1-ին շերտերը), Պաղեստին (Կիրբեթ-Կերակը, Բեթշենը), Ուրմիո լճի արևելյան և արևմտյան շրջանները (Գեոյթեփեն, Յանղթեփեն) և այլ բնակավայրեր[1]։ Այս մշակույթի տարածման ոլորտում, մասնավորապես Սիրիայում, Պաղեստինում, որտեղ արդեն վաղուց տարածված էր սեմական տարրը, Փոքր Ասիայի հարավ-արևելքում և այլ բնակավայրերում, ինչպես վկայում են սեպագիր աղբյուրները, դեռևս մ. թ. ա. XIX—XVIII դդ. տարածված են լինում խուռիական ցեղախմբերը[2]։ Սա թույլ է տալիս եզրակացնել, որ սև փայլեցրած խեցու մշակույթը նաև-խուռիական է և խուռիների միջոցով է տարածվել հիշյալ բնակավայրերում։

Ժամանակի ընթացքում հաստատվում են խուռիական դինաստիաներ Ուրկիշում (Հյուսիսային Միջագետքում), որտեղ սկսում է իշխել Թիշադալ քուրմը, Առապխայում (Տիգրիսից արևելք՝ Ադեմ գետի ափին), Եփրատից դեպի արևմուտք գտնվող Խասսուվա, Ուրշու, Մա՞մա քաղաքներում, Կիցցուվատնայում (Կիլիկիայի տարածքում), Իսուվայում (Ծոփքը), Ալզիում (Աղձնիքը), Շուբրիայում (Սասունի տարածքում)։

Մ. թ. ա. XVII դարի երկրորդ կեսին խուռիների տարածման ոլորտում, մասնավորապես Հյուսիսային Միջագետքում, ստեղծվում է քաղաքական նոր իրադրություն։ Դեպի այս տարածք, Ուրմիո լճի շրջակայքից շարժվում են խուռիական նոր ցեղախմբեր, որոնք ղեկավարվում էին հնդարիական ծագում ունեցող դինաստիայի կողմից։ Նրանց հաջողվում է համախմբել խուռիական մի շարք դինաստիաներ և ստեղծել Միտաննի-Խանիգալբատ հնդարիական դինաստիա ունեցող հզոր խուռիական թագավորություն։

Մոտավորապես այս ժամանակաշրջանում Փոքր Ասիայում կազմավորվել և հզորացել էր Խեթական պետությունը։ Վաղ խեթական աղբյուրների վկայությամբ, խեթական թագավորները կարողանում են կանխել խուռիների հետագա ընդարձակումը։

Առաջին խեթա-խուռիական ռազմական ընդհարումների պատմությունը արձանագրված է խեթական թագավոր Խաթուսիլի I-ի (մ. թ. ա. XVII դարի վերջ) ինքնակենսագրության մեջ[3]։ Դրանք տեղի են ունեցել հիմնականում Վերին Եփրատի և Հյուսիսային Սիրիայի երկրներում։ Վերին Եփրատում, որպես խեթական պետության հակառակորդներ հիշատակվում են Խասսուվան

---

[1] *Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան 1971, էջ 139։*

[2] Г. М. Аветисян. Государство Митанни (военно-политическая история в XVII—XIII вв. до н. э.), Ереван, 1984, с. 9—10:

[3] F. Imparati, Cl. Saporetti. L'autobiografia di Ḫattušili I (edazione ittita, versione accadica).—SCO, XIV, 1965, p. 44—77; Хрестоматия по истории Древнего Востока. I, М., 1980, с. 263 *(Վ. Վ. Իվանովի թարգմանությունը)։*

(Կոմմագենի շրջանում) և դրան սահմանակից խաթիական ու մի շարք այլ խուռիական քաղաքական միավորումներ, իսկ Հյուսիսային Սիրիայում Ուրշու (խեթ. Վարսուվա), Ալալախ (Մուկիշ, Օրոնտ գետի ոլորանի շրջանում) և իրենից բավականին մեծ ուժ ներկայացնող Յամխադ-Խալպա (ներկ. Հալեպ) թագավորությունները։

Իր իշխանության երկրորդ տարում Խաթուսիլի I-ը շարժվում է դեպի Հյուսիսային Սիրիա։ Նա պարտության է մատնում Ալալախը, Ուրշուն և բախվում է Ուրշուին օգնության եկած Խալպայի, Արուսաբայի և մյուս հարևան երկրների ռազմական ուժերի հետ[4], բայց էական հաջողությունների չհասնելով՝ վերադառնում է իր երկիրը։

Հաջորդ տարին, երբ խեթական թագավորը արշավել էր Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում գտնվող լուվիական Արցավա երկրի դեմ, սկսվում է խուռիների յայնածավալ հարձակումը խեթական պետության սահմանների վրա։ Հարձակման գլխավոր ուժը, ըստ Խաթուսիլի I-ի արձանագրության, հանդիսանում էր խուռիական Խանիգալբատ-Միտաննի պետությունը։ Այս կապակցությամբ խեթական թագավորը հաղորդում է— 11. ...URU.EGIR-ia a-n[a] KUR[II]-ia [URU]KÙR [KUR]Ha-ni-kal-bat i-te-ru-ub (12) KUR[URU]-A ka-lu-šu-nu it-ti-ia it-ta-ak-ru URU-lum [URU]KÙ·BABBAR-ti 1-en ir-te-ḫa .. -„(11)..., ապայն իմ հետևից Խանիգալբատ՝ թշնամի երկիրը (խեթ. տարբերակում խուռի՝ թշնամի երկիրը) իմ երկիրը մտավ (12) բոլոր երկրները ինձ հետ թշնամացան։ Խաթուսաս միակ քաղաքը մնաց (ինձ հավատարիմ)»։

Այս իրադարձությունների պատճառով Խաթուսիլին ընդհատում է արցավյան արշավանքը և վերադառնում է իր երկիրը։ Նա հակահարված է հասցնում խուռիների միասնական ուժերին և հետապնդում է դրանց մինչև Նենասսա[6], Ուլմա (Ուլլումմա) և Սալախսուվա քաղաքները[7]։

Հետագայում Խաթուսիլի I-ը կրկին ստիպված է լինում իր զորքերը ուղարկել խուռիների և նրանց հետ դաշնակցած Հյուսիսային Սիրիայի պետական միավորումների դեմ։ Հարձակումը այս անգամ, ինչպես հետևում է Խաթուսիլի I-ի արձանագրությունից, կատարվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքով, ամենայն հավանականությամբ Երզնկա, Սոփք, Մելիտենե, Կոմմագենե առևտրական ճանապարհով։ Խեթական թագավորին հաջողվում է իր ազդեցության ոլորտը ներառնել Վերին Եփրատի աջափնյակի և Հյուսիսային Սիրիայի մի մասը։ Նրա նվաճողական քաղաքականությունը շարունակում է հաջորդը՝ Մուրսիլի I-ը (մ. թ. ա. XVI դարի սկիզբը)։ Վերջինիս դահակալության շրջանի կարևորագույն իրադարձություն է դառնում Խալպայի, Բաբելոնի և խուռիների[8] դեմ մղված պատերազմը։ Այս պատերազմի ժամանակ, ինչպես նշվում է խեթական թագավոր Թելեպինուի

---

4 Г. Г. Гиоргадзе. Хетты и хурриты по древнехеттским текстам.—ВДИ. 1969, № 1, с. 72.

5 Cl. Saporetti. L'autobiografia di Ḫattušili I (versione accadica), p. 77; Г. Г. Гиоргадзе. Хетты и хурриты..., с. 73; Г. М. Аветисян. Государство Митанни, с. 13.

6 Նենասսա քաղաքը տեղադրվում է Հալիս գետի միջին հոսանքից դեպի հարավ ընկած տարածքում և նույնացվում է Նաննասոսի հետ (A. Goetze. JCS, vol. XVI. 1962. № 1, p. 27)։

7 Хрестоматия по истории Древнего Востока, М., 1980, с. 263։ Ուլմա և Սալախսուվա քաղաքները գտնվել են Կանեշի և Եփրատի միջև ընկած տարածքում (A. Goetze. Op. cit. p. 27)։

8 Մուրսիլի I-ը չի անցնում Հայկական լեռնաշխարհի և Միտաննիի սահմանները։ Նա բախվում է Եփրատի արևմուտքում հաստատված խուռիական քաղաքական միավորումների և, հավանաբար, դրանց օգնության ժամանած միտաննական որոշ ջոկատների հետ (տե՛ս Г. Г. Гиоргадзе. Хетты и хурриты..., с. 80).

հրամանագրի տեքստում[9], Մուրսիլի I-ը պարտության է մատնում հակառակորդի ուժերը, հավանաբար, կասիտների[10] օգնությամբ, որոնք, ինչպես կարելի է ենթադրել անուղղակի տվյալներից, խեթերի դաշնակիցներն էին։ Հետևաբար, պատահական չէ, որ այս հաղթանակից հետո Բաբելոնում ստեղծվում է կասիտների դինաստիան (մ. թ. ա. 1595—1155 թթ.), իսկ Հյուսիսային Սիրիայում և Վերին Եփրատի աջափնյակում ամրապնդվում են խեթական պետության դիրքերը։

Շուտով քաղաքական իրադրությունը փոխվում է։ Մուրսիլի I թագավորը ղոհվում է մ. թ. ա. 1595 թ. պալատական դավադրության հետևանքով[11]։ Գահը գրավում է նրա քրոջ՝ Խարապսիլիի ամուսինը՝ Խանթիլին։ Վերջինիս իշխանության տարիներին խուռիները կրկին ներխուժում են Խաթիի սահմանները։ Նրանք, ինչպես ենթադրվում է, խեթական պետության ընդդիմադիր ուժերի աջակցությամբ դերեվարում ու մահապատժի են ենթարկում Խարապսիլի թագուհուն որդիների հետ միասին[12]։ Խանթիլիի մահից հետո երկրում գահակալական կռիվներ են սկսվում։ Իշխանությունը հաջորդաբար վերցնում են Ցիդանտա I, Ամմունա, Խուցցիա և Թելեպինու թագավորները։ Երբ վերջինս իշխանության գլուխ բարձրացավ (մ. թ. ա. XVI դարի երկրորդ կեսը), խեթական պետությունը թուլացել ու կորցրել էր իր ազդեցությունը հարակից շրջաններում։ Թելեպինուն մեծ ջանքերի շնորհիվ վերականգնում է խեթական տիրապետությունը որոշ շրջաններում[13] և Հյուսիսային Սիրիա հասնելու նպատակով քաղաքական պայմանագիր է կնքում Կիլիկիայի տարածքում արդեն կազմավորված ու հզորացած խուռի-լուվիական Կիցցուվատնա պետության Իշպուդախշու թագավորի հետ։ Այս պայմանագրից մեզ հասել է հետևյալ հատվածը. DUB I^{KAM} iš-ḫi-ú-la-<aš> ^{I}Išpudaḫšušza LUGAL KUR^{URU}Kizzuwatna ^{I}Tellipinušša LUGAL KUR Ḫatti GIM-an iš-ḫi-ú-ul ier «Առաջին աղյուսակը, այս պայմանագրի, երբ Իշպուդախշուն, Կիցցուվատնայի թագավորը և Թելեպինուն Խաթթիի թագավորը մի պայմանագիր կնքեցին»[14]։ Նույն նպատակով և նույնպիսի պայմանագիր հետագայում Կիցցուվատնայի Պիլլիա թագավորի հետ է կնքում խեթական Ցիդանտա II թագավորը[15]։

Այնուհանդերձ խեթական այս թագավորների առաջխաղացման ծրագրերը չեն իրականանում։ Խուռի-միտաննական թագավորները խեթական պետության դեմ ընդհանուր ճակատ կազմելու նպատակով իրենց շուրջն են համախմբում Կիցցուվատնան, Հյուսիսային Սիրիայի, Վերին Եփրատի և Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորումները։ Այս կապակցությամբ կարևոր տեղեկություններ են պահպանվել խեթական Սուպպիլուլիումա I (մ. թ. ա. XIV դարի կեսերին) և Կիցցուվատնայի Սունաշշուրա II թագա-

---

[9] E. Sturtevant, G. Bechtel. A Hittite Chrestomathy, Philadelphia, 193˙, p. 184, № 9.

[10] Կասիտների լեզվի պատկանելության հարցը մնում է անորոշ։ Նրանք բնակվում էին Իրանի արևմտյան մասի լեռնային շրջանում։ Նրանց մի զանգվածը դեռևս մ. թ.ա. XVIII դարում ներթափանցել էր Միջագետք և հաստատվել Եփրատ և Խաբուր գետերի խառնատեղի հարավում գտնվող Խանա երկրում։

[11] E. Sturtevant, G. Bechtel. A Hittite Chrestomathy, p. 185, № 10—11.

[12] Г. Г. Гиоргадзе. Хетты и хурриты.., с. 81—83.

[13] E. Sturtevant, G. Bechtel. A Hittite Chrestomathy, c. 186, № 24.

[14] H. Otten. Ein althethitischer Vertrag mit Kizzuvatna.—JCS, V (1951) № 4, s. 130.

[15] Г. М. Аветисян. Из политической истории государства Киццуватны.—ДВ, 5, 1988, с. 7.

վորների միջև կնքված պայմանագրում։ Պայմանագրի հատվածներից մեկում Սուպպիլուլիուման ասում է... pa-na-nu-um a-na pa-n[i a]-bi a-bi-ia[16] $^{KUR \cdot URU}$Ki-iz-zu-wa-at-ni ša $^{KUR \cdot URU}$Ḫa-at-t[i i]p-pa-ši arka$^{ar\text{-}ka}$-nu-um $^{KUR \cdot URU}$Ki-iz-zu-w[a-a]t-ni a-na $^{KUR \cdot URU}$Ḫa-a[t-t]i ip-tu-ur a-n[a ^{K}]^{UR}Ḫur-ri iš-hu-ur ... «իմ պապի ժամանակից առաջ (Խաթուսիլի II-ից առաջ մ. թ. ա. XV դարի վերջ—Հ. Ա.) Կիցցուվատնա երկիրը պատկանում էր Խաթթի երկրին։ Հետագայում (հին խեթական պետության ճգնաժամի տարիներին—Հ. Ա.) Կիցցուվատնա երկիրը Խաթթի երկրից բաժանվեց, շրջվեց դեպի Խուռի (Միտաննի) երկիրը»[17]։ Պայմանագրի մեկ այլ հատվածում Սուպպիլուլիուման ասում է ...URU$^{ḪAL \cdot ḪA}$ an-mu-ut-tim pa-na-a-nu a-na pa-ni a-bi a-bi-ia a-na ^{KUR}Ḫar-ri il-li-ku-um-mi aš-ra-a-nu uš-bu-um-mi ù ap-pu-n[a-a]n-ma arka$^{a\text{-}ka}$ a-na^{KUR}Ḫa-at-ti a-na LÚ^{MEŠ} mu-un-na-ap-p[-a]ti il-li-ku-um-mi «Այս քաղաքները[18], իմ պապի ժամանակից առաջ անցան Խուռի երկրի կողմը և այնտեղ հաստատվեցին։ Հետագայում (նկատի ունի նրա պապի՝ Խաթուսիլի II իշխանության տարիներին՝ մ. թ. ա. XV դարի վերջ—Հ. Ա.), որպես փախստականներ եկան Խաթթի երկիրը...»[19]։

Միտաննին և նրա դաշնակիցները միասնական ուժերով հակահարված են հասցնում խեթերին, ստիպելով նրանց շուրջ մեկ դար, վերանալ քաղաքական ասպարեզից։ Խեթերը ծայրահեղ աստիճանի թուլանում են, անգամ չեն կարողանում դիմադրել իրենց երկրի խորքերը ներխուժած Միտաննիի Պարատառնա (մ. թ. ա. XV դարի սկիզբ) թագավորին ենթակա Ալալախի Իդրիմի թագավորի զորամիավորումներին[20]։ Այսպիսով, Առաջավոր Ասիայում առաջնակարգ տեղ գրաված խեթական պետությունը մ. թ. ա. XVI դարի երկրորդ կեսին ճգնաժամ է ապրում՝ իր տեղը զիջելով Հյուսիսային Միջագետքում զգալիորեն հզորացած խուռիական Միտաննի-Խանիգալբատ թագա-

---

16 pa-na-nu-um a-na pa-ni a-bi a-bi-ia պետք է թարգմանել «իմ պապի ժամանակից առաջ (այսինքն Խաթուսիլի II-ից առաջ—հին խեթական պետության ճգնաժամից առաջ—Թելեպինու և Ցիդանտա II-ի իշխանության տարիներին, երբ Կիցցուվատնայի և խեթական պետության միջև գոյացել էին բարիդրացիական հարաբերություններ) և ոչ թե «իմ պապի ժամանակ», ինչպես թարգմանել են է. Վայդները (PDK, p. 91), Ա. Գյոտցեն (A. Goetze. Kizzuwatna..., p. 36—37) և ուրիշ հեղինակներ։ Իմ պապի ժամանակ—աքքադերեն կլինի a-na .ar-ṣi a-bi a-bi-ia կամ a-na pa-ni a-bi a-bi-ia, (տե՛ս նաև PDK, № 1, էջ 4—6, տող 10—13, 19; № 6, էջ 82, տող 11; № 7, էջ 90, տող 10 և այլն)։

17 PDK № 7, էջ 90, տող 5—7; A. Goetze. Kizzuwatna..., p. 36: Պայմանագրի տեքստում խեթական թագավորի անունը վնասված է։ է. Վայդները սխալմամբ վերականգնել է Սուպպիլուլիումա I-ի թոռ՝ Մուվատալլիի անունը, նրան հետևել են այլ հեղինակներ (տե՛ս օրինակ Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 49)։ Սակայն վաղուց հաստատվել է, որ պայմանագիր կնքող խեթական թագավորը Սուպպիլուլիումա I է (տե՛ս նաև A. Goetze. Kizzuwatna..., p. 59; Idem. On the Chronology of the Second Millennium B. C. JCS, XI (1957). № 3, p. 71); Ա. Խաչատրյան. Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն. Երևան, 1933, էջ 179։

18 Խոսքը վերաբերում է խեթական պետության հարավ-արևելքում գտնվող Գուրտալիսա, Արավաննա, Զապպիսա, Թեղարամա, Արմատանա և այլ քաղաք-պետություններին, որոնք ըստ PDK, № 1, էջ 4, տող 10—Սուպպիլուլիումայի հոր՝ Թուդխալիա III-ի (մ. թ. ա. 14-րդ դ. սկիզբը) իշխանության տարիներին ապստամբում են խեթերի դեմ և համախմբվելով Իսուվայի շուրջը անցնում են Միտաննիի կողմը։

19 PDK, № 7, էջ 90, տող 14—17։

20 S. Smith. The Statue of Idri-mi. London, 1949, p. 14—23, տող 64—77։

վորությանը։ Վաղ խեթական պետության անկումից հետո միտաննական թագավորները ստիպված են լինում դիմադրել եգիպտական 18-րդ դինաստիայի փարավոններին, որոնք արդեն գրավել էին Պաղեստինի և Սիրիայի որոշ շրջանները և փորձում էին իրենց իշխանությունը տարածել նաև Միտաննիի և դրան ենթակա Հյուսիսային Սիրիայի տարածքների վրա։ Երկարամյա եգիպտա-միտաննական հակադրությունները ավարտվում են մ. թ. ա. XV դարի վերջում, այն ժամանակ, երբ Փոքր Ասիայում կրկին զարթնում է ապրում խեթական թագավորությունը։ Ըստ երևույթին, հենց այս նոր թագավորության առաջխաղացման վտանգն էր, որ Միտաննիի Արտադամա I և Եգիպտոսի Թութմոս IV թագավորներին ստիպում էր հաշտության պայմանագիր կնքել։ Պայմանագրի համաձայն Արևելամիջերկրածովյան ավազանի հյուսիսային մասը մնում է Միտաննիին, իսկ հարավայինը անցնում է Եգիպտոսի իշխանության տակ։ Պայմանագիրը վավերացնելու և Եգիպտոսի հետ բարեկամական հարաբերություններ ստեղծելու նպատակով Արտադամա I իր դստերը կնության է տալիս Եգիպտոսի Թութմոս IV թագավորին։ Այս կապակցությամբ Միտաննիի թագավոր Տուշրատտան (մ. թ. ա. XIV դարի կեսեր) Եգիպտոսի Նապխուրիա՝ Ամենհոթեպ IV (էխնաթոն) փարավոնին հղած նամակում գրում է. ...e-nu-[ma]... [ni]e a-bu-šu ša [Ni]-im-mu-u-ri-ia a-na [I]A[r]-ta-da-a-ma a-ba a-bi-ia iš-pu-ra ù DUMU·MÍ š[a] ša [a-ba a-bi-ia a-ha-a-ti] a-bi-ia i-te-r[i]-iš-ši 5-šu 6-šu i[d]-ta-par ù u-ul id-di-na-a[š-š]i im-ma-ti-i-me-[e] 7-š]u] a-[na a-ba a-bi-ia i[t]-par ù i-na e-mu-u-qi-im-ma it[-ta]-din-ši «...Երբ ...Նիմմուրիայի հայրը (Նիմմուրիան կամ Նիբմուարիան Ամենհոթեպ III է, նրա հայրն է Թութմոս IV-ը—Հ. Ա.) գրեց իմ պապին՝ Արտադամային և խնդրեց իմ պապի դստեր՝ իմ հորաքրոջ ձեռքը։ Գրեց նա 5 անգամ, 6 անգամ, բայց նա նրան չտվեց (կնության), երբ 7-րդ անգամ նա գրեց իմ պապին, ու հազիվ նա նրան տվեց...»[21]։ Այսպիսով խաղաղություն է հաստատվում։ Երկու երկրների միջև ստեղծվում են քաղաքական ու տնտեսական կապեր։ Բայց երկար տարիների պատերազմական իրավիճակը թուլացրել էր Միտաննիի դիրքերը։ Եվ պատահական չէ, որ մ. թ. ա. XV դարի վերջում կրկին վերելք ապրած խեթական պետության Խաթուսիլի II թագավորը առանց մեծ ջանքեր գործադրելու ներխուժում է Միտաննիին ենթակա Հյուսիսային Սիրիայի, Վերին Եփրատի և Հայկական լեռնաշխարհի տարածքները, ինչպես նաև պայմանագիր է կնքում Միտաննիի դաշնակից Կիցցուվատնայի Պադատիշու թագավորի հետ[22]։ Հյուսիսային Սիրիայում Խաթուսիլի II-ը նվաճում է Խալապ (Հալեպ) և դրանից դեպի հարավ գտնվող Նուխաշշե և Աշտատա երկրները[23]։ Վերին Եփրատում և Հայկական լեռնաշխարհում իրեն է ենթարկում Թեգարամա, Ջազզիսա, Ալխա, Արմատանա, Արավաննա, Իսուվա (Ծոփք) և այլ նոր քաղաքական միավորումներ։ Խաթուսիլի II-ի կողմից այս տարածքների նվաճման մասին ուղղակի տվյալներ չեն պահպանվել, բայց այն փաստը[24], որ Խաթուսիլի II-ի իշխանությունից հետո, Թուդխալիա III-ի իշխանության տարիներին դրանք ազատագրվեցին խեթերից, բավական է հաստատելու համար, որ դրանք ենթարկված էին խեթերին, այն էլ նոր խեթական պետության սահմանները ընդարձակող առաջին թագավոր՝ Խաթուսիլի II-ի իշխանության տարիներին։ Այս պարզաբանումից ակնհայտ է դառնում նաև այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհում և Վերին Եփրատում հիշատակված այս նոր քաղաքական միավորումները

21 EA, № 29, տող 16—18։

22 Г. М. Аветисян. Из политической истории государства Киццуватны.—ДВ. 5, 1988. с. 9.

23 PDK, № 6, տող 19—32, էջ 82—84։

24 KBo, I, № 1, տող 10—13· PDK, № 1, տող 10—13, էջ 4։

կազմավորվել են մինչ Խաթուսիլի II-ի իշխանությունը, Խեթական պետության ճգնաժամի տարիներին (մ. թ. ա. XVI—XV դդ.)՝ այն ժամանակ, երբ Առաջավոր Ասիայում իր հզորությամբ նշանավոր է դառնում Խուռի-Միտանիի պետությունը։ Հենց այս տարիներին էլ, ամենայն հավանականությամբ Հայկական լեռնաշխարհի արևմուտքում ստեղծվում են նաև Հայասա-Ազզիի և Ալզիի թագավորությունները, որոնք համեմատաբար ավելի ուշ՝ մ. թ. ա. XIV դարի առաջին կեսին են հիշատակվում[25]։ Փաստորեն հայկական պետության ակունքները հանդիսացող Հայասա-Ազզի, Խուվա, Ալզի, Թեգարամա և այլ քաղաքական միավորումների կազմավորումն ու զարգացումը պայմանավորված են եղել Խեթական թագավորության թուլությամբ և Խուռի-Միտանիի պետության հզորությամբ։ Եվ, ընդհանրապես, Խուռի-Խեթական հակադրությունների ժամանակ Վերին Եփրատի և Հայկական լեռնաշխարհի տարածքը միշտ պաշտպանվել ու հովանավորվել է միտաննական թագավորների կողմից, իսկ այնտեղ ստեղծված քաղաքական միավորումները ունեցել են միտաննական կողմնորոշում։ Այդ հանգամանքը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ հիշյալ տարածաշրջանում մեծ մասամբ իշխում էին խուռիական դինաստիաները։

Խաթուսիլի II-ի հաջորդ Թուդխալիա III-ի իշխանության տարիներին թուլանում է Խեթական պետությունը։ Նրան ենթակա երկրները անցնում են Խուռի-Միտանիի պետության նոր թագավորի՝ Շուտառնա II-ի կողմը[26]։ Միտաննին հզորանում է ու կրկին գերիշխող է դառնում Առաջավոր Ասիայում։ Հենց այս ժամանակ էլ Եգիպտոսի փարավոն Ամենհոթեպ III-ը կնության է առնում Շուտառնայի դստերը՝ Կելուխեբային[27], որով էլ ավելի են ամրապնդվում եգիպտա-միտաննական բարեկամական փոխհարաբերությունները։

Շուտառնայի իշխանության տարիներին Միտաննիի թագաժառանգն էր նրա Տուշրատտա որդին։ Երբ Շուտառնան մահացավ (մ. թ. ա. XIV դարի սկիզբը) Տուշրատտան անչափահաս էր և այս պատճառով էլ, ինչպես կարելի է ենթադրել Տուշրատտայի նամակից, Միտաննիի դահ է բարձրանում թագավորի Արտաշշումարա որդին[28], Արտադաման (II-ը), որը, հավանաբար, միտաննական թագավորական ընտանիքից էր և դահի հավակնորդ, պայմանավորվում է Խեթական Սուպպիլուլիումա I թագավորի հետ և ոմն Փարխիի ձեռքով սպանում են Արտաշշումարա թագավորին[29]։ Դավադիրները, սակայն, որոշակի հաջողության չեն հասնում։ Միտաննիի դահը գրավում է Արտաշշումարայի եղբայրը՝ Տուշրատտան։ Այսուհետև Միտաննին ներգրավվում է երկարատև և արյունահեղ պատերազմների մեջ։ Տուշրատտայի իշխանության առաջին տարիներին Միտաննիի և Խեթական պետության միջև սկսվում է առաջին միտաննական պատերազմը։ Ճակատամարտում Տուշրատտան պար-

---

[25] H. G. Guterbock. The Deeds of Suppiluliuma as Told by His Son Mursili II.—JCS. X (1956), № 2, էջ 60 (այսուհետև՝ The Deeds of Suppiluliuma)։ Այստեղ խոսվում է Խեթական Թուդխալիա III (մ. թ. ա. XIV դարի սկիզբը) և Հայասա-Ազզիի Կարաննի թագավորների միջև կամմախում տեղի ունեցած ճակատամարտի մասին։ Ինչ վերաբերում է Ալզիին, ապա այն, որպես կազմավորված թագավորություն, Տիգրիսի վերին հոսանքում, հիշատակվում է Սուպպիլուլիումա 1-ի իշխանության տարիներին (մ. թ. ա. XIV դարի կեսերը), տե՛ս PDK № 1, p. 8, 16, № II, p. 36։

[26] KBo, I. № I, տող 10—13, PDK № I, տող 10—13, էջ 4; KBo VI, № 28, տող 6—15, տե՛ս նաև K. A. Kitchen. Suppiluliuma and the Amarna Pharaohs. Liverpool, 1962, p. 51.

[27] EA, № 17, տող 24—30։

[28] Նույն տեղում, տող 11—12։ 1984 թ. Թել Բրակի պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի արձանագրություն, որտեղ Արտաշշումարան առաջին անգամ թագավորի տիտղոսով է հիշատակվում — Ar-ta-aš-šu-ma-ra LUGAL— (I. Finkel. Inscriptions from Tell-Brak — 1984—Iraq, XLVII. 1985, էջ 187—201)։

[29] PDK, № 1, էջ 2; EA, № 17; տող 11—20։

տության է մատնում Սուպպիլուլիումայի բանակը[30]։ Հաղթանակի ժամանակ զրաված ռազմավարից Միտաննիի թագավորը նվերներ է ուղարկում իր բարեկամին՝ Եգիպտոսի Ամենհոթեպ III փարավոնին և հպարտությամբ հայտնում է նրան իր ռազմական հաջողությունների մասին[31]։

Խեթերի թագավորը փորձում է դիվանագիտական հարաբերություններ ստեղծել իր հարևանների՝ Միտաննիի դաշնակից երկրների հետ։ Նա հաջողությամբ խաղաղության պայմանագիր է կնքում Հայասայի Հուկկանա և Կիցցուվատնայի Սունասսուրա II թագավորների հետ[32]։ Հուկկանային Սուպպիլուլիման կնության է տալիս իր քրոջը և դրանով բարեկամական հարաբերություններ է ստեղծում հայասացիների հետ։ Սունասսուրային Սուպպիլուլիման ճանաչում է որպես անկախ Կիցցուվատնայի օրինական թագավոր։ Դատելով կնքված պայմանագրերի տեքստերից՝ նա կարողանում է շահագրգռել Հուկկանային և Սունասսուրային այն աստիճանի, որ վերջիններս խզում են իրենց կապերը Միտաննիի թագավորի հետ և ռազմական փոխօգնության համաձայնության են գալիս խեթերի հետ։ Խեթական ռազմական գործողությունների ծավալման համար նպաստավոր պայմաններ ստեղծող այս հանգամանքը մեծ չափով թուլացրեց Միտաննիի և Հայկական լեռնաշխարհի մյուս թագավորությունների դիմադրությունը։ Այսպիսով, իր թիկունքն ապահովելուց հետո, Սուպպիլուլիման արշավանք է կազմակերպում Խուվայի (Ծոփքի) դեմ։ Պարտության է մատնում այնտեղ կուտակված ռազմամիավորումներին և շարժվում է դեպի Հայկական լեռնաշխարհի հարավարևմուտքում գտնվող Ալզի (Աղձնիք) երկիրը։ Ալզիի թավավոր Անտարատլին, խուսափելով ռազմական բախումներից, հաշտություն է կնքում խեթական թաղավորի հետ և այդ առթիվ որպես նվեր ստանում է Ալզիի սահմանին գտնվող և Սուպպիլուլիումայի կողմից նվաճված Կուտմար քաղաքը[33]։ Խեթական բանակը ներխուժում է Միտաննիի հյուսիսային շրջանները և ընդհարվում միտաննական ռազմական ուժի հետ։ Միտաննիի դեմ Սուպպիլուլիման էական հաջողության չի հասնում[34]։ Ուստի նա անցնում է Եփրատ գետը և մտնում Հյուսիսային Սիրիայի տարածքը։ Այստեղ Սուպպիլուլիման նվաճում է Խալպան (այժմ Հալեպ), Մուկիշը (Ալալախ), Նուխաշշեն, Նիան, ինչպես նաև իր կողմն է գրավում Եգիպտոսին ենթակա սիրիական մի շարք շրջաններ։ Սուպպիլուլիումայի այս բոլոր նվաճումները, սակայն, ժամանակավոր էին, քանի որ նա չկարողացավ հաղթահարել իր գլխավոր հակառակորդին՝ Միտաննիի Տուշրատտա թագավորին, որի նախաձեռնությամբ շուտով Սիրիայի և Վերին Եփրատի տարածքներում կրկին հակախեթական ապստամբություններ են բռնկվում[35]։ Ապստամբների դեմ հանդես է գալիս Կիցցուվատնայում քուրմ նշանակված Սուպպիլուլիումայի Թելեպինու որդին[36]։ Սակայն խեթերի համար անսպասելի վտանգավոր իրադրություն է ստեղծվում։ Ինչպես կարելի է եզրակացնել Մուրսիլի II-ի հաղորդումից, Եգիպտոսի և Միտաննիի միջև կնքվում է ռազմական դաշինք[37]։ Այս հանգամանքը, հավանաբար ստիպում է Թելեպինուին թողնել 600 զինվորից բաղկացած իր գունդը Լուպակկիի հրամանատարությամբ և մեկնել խաթի՝ Սուպպիլուլիումային հայտնելու թշնամու առաջխաղացման մասին[38]։ Այս ընթաց-

---

30 EA, № 17, տող 31—34։

31 Նույն տեղում, տող 36—38։

32 J. Friedrich. Staatsverträge des Ḫatti-Reiches, T. 2.—MVAG, Bd. 34, 1930. Hf I. էջ 103—136 PDK, № 7.

33 PDK, № 1, տող 25—26, էջ 8։

34 Г. М. Аветисян. Государство Митанни, с. 73—74։

35 The Deeds of Suppiluliuma, p 92,

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 92—94։

38 Նույն տեղում, էջ 92։

ում Եգիպտոսը ազատագրում է Սիրիայի հարավային մասերը, իսկ Միտաննին՝ հյուսիսայինը[39]։

Սուպպիլուլիումաս մեծ բանակով շարժվում է դեպի հարավ։ Նա Թեզրամայի մոտ գտնվող Թալոյա բնակավայրում զորաժամ է անցկացնում և այնուհետև արշավանք է կազմակերպում դեպի Կարքեմիշ քաղաք[40]։ Կարքեմիշը պաշարելուց հետո Սուպպիլուլիումաս իր զորքի մի մասը ուղարկում է դեպի հարավ՝ Եգիպտոսի կողմից ազատագրված սիրիական շրջանների դեմ[41]։ Հենց այս ժամանակ էլ, ինչպես Եգիպտոսում, այնպես էլ Միտաննիում քաղաքական նոր իրադրություն է ստեղծվում։ Եգիպտոսում մահանում է Թութանխամոն փարավոնը (մ. թ. ա. XIV դարի երկրորդ կեսը)։ Գահաժառանգ չլինելու պատճառով իշխանության ղլուխ է բարձրանում փարավոնի կինը՝ Տախամունդուն[42]։ Թագուհին, հավանաբար, ելնելով քաղաքական իրավիճակից, կամ ինչպես հաղորդում է Սուպպիլուլիումաս՝ խեթական բանակի առաջխաղացման մտավախությունից[43], փորձում է հաշտվել խեթական թագավորի հետ։ Նա խնդրում է Սուպպիլուլիումային Եգիպտոս ուղարկել իր որդիներից մեկին, պայմանով, որ նա դառնա իր ամուսին և Եգիպտոսի թագավորը[44]։ Եգիպտական թագուհու խնդրանքի անկեղծության մեջ համոզվելու նպատակով Սուպպիլուլիումաս սկզբում Եգիպտոս է ուղարկում Խաթթուսա-Ցիտին՝ իր սենեկապետին, ասելով նրան՝ «դնա և բեր ինձ ճշմարիտ խոսքը»[45]։ Միաժամանակ Հյուսիսային Սիրիայում Սուպպիլուլիումաս հակախուրիական ռազմական գործողություններ է վարում։ Նա նվաճում է Կարքեմիշը և այլ սիրիական շրջանների խեթական թագավորը իր որդիներից Պիասիլիին (խուր. անունը Շառի-Կուշուխ) նշանակում է Կարքեմիշի թագավոր, իսկ Թելեպինուին՝ Խալեպի թագավոր[46]։ Այս հաջողություններից հետո խեթական թագավորը վերադառնում է իր երկիրը՝ ձմեռելու նպատակով[47]։ Գարնանը Եգիպտոսից, եգիպտական խանի սուրհանդակի ուղեկցությամբ վերադառնում է Խաթթուսա-Ցիտին, բերելով լուրը եգիպտական թագուհու բարի մտադրության մասին[48]։ Վերջապես Սուպպիլուլիումաս Եգիպտոս է ուղարկում իր Ցաննանցա որդուն, բայց նա դեռ եգիպտական պալատ չհասած սպանվում է եգիպտացիների ձեռքով[49]։ Այդ պատճառով Սուպպիլուլիումաս ռազմական գործողություններ է վերսկսում Եգիպտոսի դեմ և ստիպում է նրան նա քաշվել սիրիական առանձին շրջաններից[50]։

---

39 Նույն տեղում, էջ 93; Միտաննիի տիրապետությունը Սիրիայում հասնում էր մինչև Կինզա (Կադեշ) քաղաքը (նույն տեղում, էջ 97)։

40 Նույն տեղում, էջ 93։

41 Նույն տեղում, էջ 94; տե՛ս նաև H. G. Güterbock. Mursilis accounts of Suppiluliuma's dealings with Egypt.—Revue Hittite et asianique, XVIII, 1960, p. 60; E.A. № 17[illegible], տող 14–17։

42 Սեպագիր ^{ᶜᵃᵗ}Da-ḫa-mu-un-zu անունը առաջացել է եգիպտերեն t3hm(t)-nsw բառից, որը նշանակում է «թագուհի»։ Տե՛ս W. Federn. Daḫamunzu (KBo V, 6, III. 8).—JCS, XIV (1960), № 1, p. 33; K. A. Kitchen. Suppiluliuma and the Amarna Pharaohs, p. 22, not. 2; E. F. Campbell. The Chronology of the Amarna Letters. Baltimore, 1963, p. 54, ծան. 73։ Թութանխամոնի կնոջ իսկական անունը եղել է Անխեսենամոն։

43 The Deeds of Suppiluliuma, p. 97.

44 Նույն տեղում, էջ 94, 97։

45 Նույն տեղում, էջ 95։

46 KUB. XIX, 9; KBo, VI, 28; The Deeds of Suppiluliuma, p. 95–96; K. A. Kitchen. Suppiluliuma and the Amarna Pharaohs, p. 3.

47 The Deeds of Suppiluliuma, p. 96.

48 Նույն տեղում, էջ 97։

49 Նույն տեղում, էջ 108։

50 A. Goetze. The Struggle for the Domination of Syria (1400—1300 B. C), CAH, II, 1965, p. 20.

Միտաննիում պետական հեղաշրջում է կատարվում։ Տուշրատտա թագավորը սպանվում է իր որդիներից մեկի ձեռքով[51]։ Գահը սակայն գրավում է նախկին հավակնորդներից մեկը՝ Արտադամա II-ը։ Նա միտաննական զորքի հրամանատար է նշանակում իր Շուտտառնա (III) որդուն։ Իրենց իշխանությունը ամրապնդելու և պատերազմի ժամանակ ռազմական օգնություն ստանալու նպատակով նրանք ոսկի և արծաթ են ուղարկում Աշշուրի և Ալեպի (Աղձնիք) թագավորներին[52]։ Միտաննիի օրինական գահաժառանգը՝ Շատտիվազան երկրից հեռանում է և հարկադրված դիմում Սուպպիլուլիումա I-ի օգնությանը։ Խեթական թագավորը Շատտիվազային նշանակում է իր զինվորական ջոկատների հրամանատար և այդ ջոկատները միացնում է Կարքեմիշում իշխող Պիասիլիի զորամիավորումներին[53]։ Երկու արքայորդիները միասնական ուժերով ներխուժում են Միտաննիի սահմանները[54]։ Նրանք պարտության են մատնում Իրիդե[55] քաղաքի մոտ կենտրոնացված Շուտտառնայի բանակը և առանց մեծ դժվարության գրավում են իշխանությունը Խուռի-Միտաննիում[56]։

Սուպպիլուլիուման Շատտիվազային կնության է տալիս իր դստերը և նստեցնում է նրան հայրական գահի վրա[57]։

Այսպիսով, հիմնականում ավարտվում է խուռի-խեթական երկարամյա պատերազմը։ Երկու երկրների միջև կնքվում է հաշտության պայմանագիր[58]։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ВДИ — Вестник древней истории.
ДВ — Древний Восток.
УКН—Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи, М., 1960.
ЭВ — Эпиграфика Востока.
KBo — Keilschrifttexte aus Boghazköi.
KUB — Keilschrifttexte aus Boghazköi.
JCS — Journal of Cuneiform Studies.
MVAG — Mitteilungen der Vorderasiatisch—Agyptischen Gesellschaft.
PDK — E. F. Weidner, Politische Dokumente aus Kleinasien (Die Staatsvertröge in akkadischer Sprache aus dem Archiv von Boghazköi), Leipzig, 1923
RE — Pauly—Wissowa, Real-Encyclopadie der Classischen Altertums Wissenschaft, Stuttgart.
SCO — Studi classici e orientali.

---

51 KBo, 1, 1, տող 48—50; PDK, № 1, տող 48—50, էջ 14—16։ Հայրասպան որդու ճակատագիրը մնում է անհայտ։ Հավանարար նա նույնպես մեկ այլ դավադրության զոհ է դառնում։

52 PDK, № 2, տող 1—12, էջ 36—38։

53 PDK, № 2, տող 31—36, էջ 42—44։

54 Նույն տեղում, տող 36—40։

55 Իրիդե քաղաքը գտնվել է Եփրատից դեպի արևելք, Կարքեմիշ և Խառան քաղաքների միջև։

56 PDK, № 3, տող 41—55, էջ 46; The Deeds of Suppiluliuma, p. 111, տող 27—34։ Շուտտառնայի դաշնակից Աշշուրի թագավոր Աշշուրուրալիտը Շուտտառնային օգնելու նպատակով շարժվում է մինչև Միտաննիի սահմանները, բայց մեզ անհայտ հանգամանքներից ելնելով նա պատերազմին չի մասնակցում (տե՛ս J. Friedrich. Ein Bruchstück des Vertrages Mattiwaza-Suppiluliuma in Hethitischer Sprache?—Archiv fur Keilschriftforschung, 1925, № 3—4, S. 119—124):

57 PDK, № 1, տող 58, էջ 18։

58 Նույն տեղում, № 1, № 2։

АРМЯНСКОЕ НАГОРЬЕ В СФЕРЕ ХУРРИТО-ХЕТТСКИХ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ВЗАИМООТНОШЕНИЙ

Г. М. АВЕТИСЯН

Резюме

Первые сведения о хуррито-хеттских военно-политических взаимоотношениях засвидетельствованы в анналах хеттского царя Хаттусили I (конец XVII в. до н. э.), согласно данным которых основные хуррито-хеттские военные действия происходили на западных границах Армянского нагорья и в Северной Сирии. Хеттские цари древнего периода, особенно Хаттусили I, Мурсили I и Телепину, вели активную военную политику, чтобы окончательно подчинить своему контролю соседние хуррит-ские династии и северо-сирийские царства. Однако столкновения с хурритским государством Митанни, также имевшим свои политические интересы в этом регионе, не позволяли им осуществлять свои военные планы. После распада древнехеттского царства (в конце XVI в до н. э.) к юго-востоку от его границы образовались новые города-государства: Тегарама, Арматана, Мальдия (Мелид), Аравана и др.; а на территории Армянского нагорья были созданы первые государственные образования — Хайаса-Аззи, Исува, Алше. Все эти новые политические силы придерживались во внешней политике митаннийской ориентации, и во главе с государством Митанни впоследствии (в конце XV в. до н. э.) стали активно бороться против возрожденного Хеттского царства. Эта борьба велась с переменным успехом вплоть до царствования Шаттиваззы в Митанни (во II половине XIV в. до н. э.), когда между Хатти и Митанни был заключен мирный договор, закрепленный браком Шаттиваззы с дочерью хеттского царя Суппилулиумы I.

ARMENIAN HIGHLANDS IN THE SPHERE OF THE HURRIAN AND HITTITE MILITARY-POLITICAL RELATIONS

H. M. AVETISSIAN

Summary

The old Hittite inscriptions mention that in the XVII—XVI B. C. the main military operations between the Hurrians and the Hittites took place in the west border of the Armenian Highlands and Northern Syria The Hittite kings Hattusili I, Mursili I, Hantili and Telepinu tried to keep under their control neighbouring Hurrian dynasties and Northern Syrian kingdoms, but they began to clash with the kings of Hurri—Mitanni and were unable to realize their military operations. At the end of XVI B. C., the old Hittite kingdom ceased to exist as a power. Hayasa-Azzi, Isuwa, Alse, Tegarama, Armatana, Maldia, Aravana and other new state formations had been formed in the Armenian Highlands and to the south-east of Hittite kingdom. These new political powers adopted the Mitannian orientation and headed by the Hurrian kingdom. At the end of XV B. C., they began to clash with the Hittite state, which had regained its power. The military operations between the Hurrians and the Hittites ceased in the second half of XIV B. C. when the Hittite king Suppiluliuma I concluded a treaty with Mitannian king Šattiwazza and gave him one of his daughters in marriage.